# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N3

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ի, միջև 2025թ. հունիսի 10-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾԶԲ-2025/4/1 ծածկագրով «Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** «08» 04 2026թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող)**, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1869-Ն որոշման առաջին կետի երկրորդ ենթակետի պահանջները, ՀՏԶՀ Ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության զեկուցագիրը և Կողմերի միջև 2025թ. հունիսի 10-ին կնքված **«ՀՀ Արմավիրի մարզի «Վարդանաշենի ԲԱ» ՀՈԱԿ-ի կառուցում», «ՀՀ Արմավիրի մարզի «Տանձուտի ԲԱ» ՀՈԱԿ-ի կառուցում», «ՀՀ Արմավիրի մարզի «Խանջյանի ԲԱ» ՀՈԱԿ-ի կառուցում» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պետական գնման **N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾԶԲ-2025/4/1** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.5 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 22 756 838 **(քսաներկու միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր երեսունութ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

**1-ին չափաբաժին**՝ 6 891 873 **(վեց միլիոն ութ հարյուր իննսունմեկ հազար ութ հարյուր յոթանասուներեք)** ՀՀ դրամ, որից **1 091 873 (մեկ միլիոն իննսունմեկ հազար ութ հարյուր յոթանասուներեք)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակայվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը,**

**2-րդ չափաբաժին**՝ 8 492 834 **(ութ միլիոն չորս հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր երեսունչորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 2 692 834 **(երկու միլիոն վեց հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր երեսունչորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակայվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

**3-րդ չափաբաժին**՝ 7 372 131 **(յոթ միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար մեկ հարյուր երեսունմեկ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 1 572 131 **(մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար մեկ հարյուր երեսունմեկ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակայվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «ԱՐԱՄԵ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աղոնց 6/169 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 08270782 |
| Զափ. 1 Հ/Հ՝ 900011058808 | Հ/Հ՝ 1570008306443000 |
| Զափ. 2 Հ/Հ՝ 900011058816 | Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ |
| Զափ. 3 Հ/Հ՝ 900011058824 | |
| Կենտրոնական գանձապետարան | |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն՝ Ա.Սարգսյան |
| Սարգիս Բաղինյան | |
| ______________ /ստորագրություն/ | ______________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |